ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5308-Ա « 30 » հոկտեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի
№ 5227-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ
ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԵՐԳԱՄՈ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանի գրությունը՝ FSB Forum Italy 2026 ցուցահանդեսին և դրա շրջանակում կազմակերպվող միջոցառումներին մասնակցելու նպատակով.

1. Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի գլխավորած պատվիրակությանը՝ 2026 թվականի նոյեմբերի 10-ից 13-ը ներառյալ գործուղել Իտալիայի Հանրապետության Բերգամո քաղաք՝ հետևյալ կազմով.

Պետրոս Պետոյան	Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար
Արթուր Ջուլհակյան	Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ

2. Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2026 թվականի հոկտեմբերի 26-ի «Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանին Իտալիայի Հանրապետության Բերգամո քաղաք գործուղելու մասին» № 5227-Ա որոշումը:

3. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Կենտրոն վարչական շրջանի 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

4. Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանի և Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Արթուր Ջուլհակյանի բացակայության

ընթացքում պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Բագրատ Վարդանյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ 